



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՎԸ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՐԱՆԳԻԵՐՈՒ ԱՐԵՒՍՏԵԱՆ ԹԵՍԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



## ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆ ՈՒ ԱՉԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՅԱՅՈՒԹԻՉՆԵՐ ԱՆԹԻԼԻԱՍ ԿԸ ՄԵԿՆԻՆ

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան Կիրակի, 15 Նոյեմբերին կը մեկնի Լիբանան, Մեծի Տան Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Մայրավանքի յարկին տակ մասնակցելու համար շարք մը ժողովներու, որոնք հիմնականօրէն յատկացուած են Յիւսիսային Ամերիկայի երեք թեմերուն:

18-ին 20 Նոյեմբերին, տեղի պիտի ունենան, Ս. Աթոռոյս գահակալ Ա.Ս.Օ.Ս.Ս. Արքամ Ա. Կաթողիկոսին նախագահութեամբ, Ազգ. Կեդրոնական Վարչութեան գոյց ժողովներուն հետ Արեւելեան, Արեւմտեան եւ Զանատայի թեմերու թեմակալ Առաջնորդներուն ու Ազգ. Վարչութեանց Ներկայացուցիչներուն հանդիպումները: Առաջնորդ Սրբազնին կողքին, այս ժողովներուն պիտի մասնակցին Ազգ. Կեդրոնական Վարչութեան մեր թեմի անդամներէն Տիարք Խաժակ Տիքինեան եւ Վահե Եագուաթեան, ինչպէս նաև Ազգ. Վարչութեան ատենապետն ու փոխ ատենապետը՝ Տոքթ. Կարօ Յակոբեան եւ Տիարք Կարօ Աւագեան:

Եշօրեայ ժողովները պիտի քննարկեն Կաթողիկոսութեան, անոր բաժանմունքներուն ու Թեմերուն միջեւ գործակցութեան զարգացման միջոցները, մեր Եկեղեցին ու ժողովուրդը յուզող անմիջական հարցեր, ինչպէս նաև ամերիկեան մեր թեմերուն միջեւ գործակցաբար իրագործելի ծրագիրներ:

## PRELATE TO DEPART FOR LEBANON TO PARTICIPATE IN MEETINGS AT THE CATHOLICOSATE

On Sunday, November 15<sup>th</sup>, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will depart for Lebanon to participate in meetings at the Catholicosate presided over by H.H. Catholicos Aram I. The Prelates of the North American Prelacies, Central Executive members and Executive Council members from the three Prelacies will participate in the meetings.

Central Executive members Mr. Khajag Dikijian and Mr. Vahe Yacoubian, along with Executive Council Chair Dr. Garo Agopian and Vice-Chair Mr. Garo

Avakian will also participate in the meetings, which are scheduled for November 18<sup>th</sup> to the 20<sup>th</sup>.

\*\*\*

## **ՅՐԱԺԵՇՏԻ ՅԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ Ի ՊԱՏԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒԱՒՐԻՉ ԵԿԵՂԵՑԻՉ ՊԱՇՏՈՆԱՒԱՐՏ ՅՈՎԻՒ ԱՐԺ. Տ. ԱՐԵՏԻՍ ՔՅՆՅ. ԹՈՐՈՍԵԱՆԻ**

Ուրբաթ, 13 Նոյեմբերի երեկոյեան, Սան Ֆրանսիսկոյի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ Յոգաբարձութիւնը ողջերթի ու յարգանքի հանդիսութիւն մը կազմակերպած է ի պատիւ պաշտօնաւարտ Յոգելոր Յովիլին՝ Արժ. Տ. Արետիս Քիևյ. Թորոսեանի: Իբրեւ Առաջնորդ Սրբազնին Ներկայացուցիչը՝ հանդիսութեան Ներկայ պիտի ըլլայ Գերա. Տ. Միւռոն Ծ. Վրդ. Ազնիկեան եւ պիտի փոխացնէ Առաջնորդ Սրբազնին ողջոյնի ու գնահատանքի խօսքը, ինչպէս նաեւ յանուն Առաջնորդ Սրբազնին Տեր Յօր պիտի նուիրէ լանջախաչ մը:

Ներկայ պիտի ըլլան Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Յոգշ. Տ. Վաղինակ Վրդ. Մելոյեան, հոգաբարձութեան անդամներ, Ազգային Երեսփոխանսեր, Ազգ. Գռուզեան-Զաքարեան-Վասպուրական Վարժարանի, Կազմակերպութեանց ու միութեանց Ներկայացուցիչներ:

Տեր Յօր ուղղուած գնահատանքի ու ողջերթի խօսքերուն կողքին, պիտի գործադրուի գեղարուեստական յայտագիր մը, որուն մասնակցութիւն պիտի բերէն Վարժարանին աշակերտներն ու ծխական համայնքի անդամներ:

## **FAREWELL RECEPTION FOR FORMER PASTOR OF ST. GREGORY CHURCH**

The Board of Trustees of St. Gregory Church of San Francisco has organized a farewell reception for outgoing parish pastor Rev. Fr. Avedis Torossian, to take place on the evening of Friday, November 13<sup>th</sup>, 2009.

Very Rev. Fr. Muron Aznikian will attend and convey the Prelate's blessings and well wishes, as well as present the pastor with a pectoral cross on behalf of the Prelate.

Among those in attendance will be Very Rev. Fr. Vaghinag Meloian, Board of Trustees members, Delegates, Krouzian-Zekarian-Vasbouragan School representatives, and members of community organizations.

\*\*\*

## **ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ ՓԱՍՍԱՏԻՆԱՅԻ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻՅ ՀԱՍՏԱՏՄԱՆ 24-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ**

Այս տարի կ'ամբողջանայ Փասատինայի ծխական համայնքին հաստատման 24րդ տարեդարձը:



Այս առիթով, Կիրակի 8 Նոյեմբերի առաւոտուն, Փասատինայի Ս. Սարգիս Եկեղեցւոյ մեջ Եպիսկոպոսական հանդիսաւոր Ս. Պատարագ մատուցուեցաւ Թեմիս Առաջնորդ՝ Բարձր. S. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեանի կողմէ: Ս. Խորանին սպասարկեցին Յոզ. S. Պարթեւ Վրդ. Կիւլիմեան եւ Եկեղեցւոյ

հովիւը՝ Արք. S. Խորեն Զինյ. Պապոշեան:

Նախքան իր հոգեւոր պատգամը, Առաջնորդ Սրբազն Յայրը փառք եւ գոհութիւն վերառաքեց Աստուծոյ, եւ վեր առաւ խորհուրդը օրուան Ս. Պատարագի մատուցման, որով 24 տարիներ առաջ, 1985 թուականին, Ալեն Պողոտային վրայ սկիզբ առած Փասատինայի Յայաստանեաց Առաքելական Եկեղեցին, այսօր սեփականատերև է հայկական ոճով եւ աղօթաբոյր մթնոլորտով Ս. Սարգիս Եկեղեցիին: Սրբազն Յայրը մաղթեց, որ նոյն մթնոլորտը առաւել եւս տարածուի Ս. Սարգիս Եկեղեցւոյ համայնքին մեջ, որպեսզի ամենքը մեկ հաւաքական աղօթք դառնան եւ շնունեն ու պայծառացնեն հոգեւոր Եկեղեցին:

Օրուան ճաշու ընթերցուածն մեկնելով, ուր կը պատմուի Յայրոսի աղջկան ու Տերատես կնոջ բժշկութեան հրաշքները, Առաջնորդ Սրբազնը իր քարոզին մեջ շեշտեց այն հիմնական գաղափարը, թէ իւրաքանչիւր մարդ հոգեկան տարբեր կարիքի մեջ էր, սակայն բոլորին ալ սպասումն էր Մեսիան տեսնել, Յիսուսի հանդիպիլ եւ անկէ շնորհներ ստանալ: Եւ ահա, իրենց ունեցած հաւատքին ու աղօթքին իբրեւ պատասխան՝ Քրիստոս Եկա՛ւ անոնց, ու անոնք բժշկուեցան: Այսօր մենք ալ, շարունակեց Սրբազն Յայրը, որպես Եկեղեցի պետք ունինք կենդանի՝ հաւատքի, Ս. Յոգիով լիցքաւորուելու, պետք ունինք մեր կեանքը հաւաքական աղօթքի վերածելու, իրարու համար աղօթելու, մեկդի ձգելով ու մեզմէ հեռո՛ւ վանելով կործանարար ու շլատիչ հարցերը, զգայնութիւնները, անհասկացողութիւնները: Աղօթքը պետք է ըլլայ մեր ուղին, իսկ հաւատքը՝ առաջնորդը:

Ս. Պատարագի աւարտին, տեղի ունեցաւ հոգեհանգստեան արարողութիւն, վասն հոգւոցն Եկեղեցւոյ նախկին սպասարկուներուն եւ հանգուցեալներուն:

Աւարտին, «Ուրախ Լեր» շարականի երգեցողութեամբ, թափօրը յառաջացաւ Եկեղեցւոյ գալիթը, ուր հաւատացեալները մեծ

խանդավառութեամբ երգեցին «Կիլիկիա»ն եւ «Ի վեհ բարձանց» հայրապետական մաղթերգը: Առաջնորդ Սրբազնը անգամ մը եւս շնորհաւորեց Ս. Սարգիս Եկեղեցւոյ համայնքը եւ բարօր օրեր ու առաքելութեան երկար տարիներ մաղթեց բոլորին:

Նոյն օրը, կեսօրին, Սարաշի հայրենակցական միութեան սրահին մէջ տեղի ունեցաւ սիրոյ ճաշ, և ախագահութեամբ Առաջնորդ Սրբազն Յօր, մասնակցութեամբ հոգեւորականաց դասու անդամներու, Ազգ. Վարչութեան ներկայացուցիչին, հոգաբարձական եւ տիկնաց միութեան կազմերուն, Եկեղեցւոյ գլխաւոր բարերարներուն, անոնց հարազատներուն, հովանաւորներուն եւ Եկեղեցւոյ յարակից մարմիններուն ու բարեկամներուն:

Ճաշի ընթացքին շնորհակալական խօսքերով հանդէս եկան Եկեղեցւոյ հոգեւոր հովիւն ու հոգաբարձութեան ատենապետը՝ Տիար Յակոբ Ետալեան: Առաջնորդ Սրբազն Յայրը անգամ մը եւս գևահատեց Ս. Սարգիս Եկեղեցւոյ մէջ ընտանիքը, եւ օրինեց բոլորին անսակարկ նուիրումն ու տարած ծառայութիւնը:

## PRELATE CELEBRATES DIVINE LITURGY AT ST. SARKIS CHURCH ON THE 24<sup>TH</sup> ANNIVERSARY OF THE PASADENA PARISH COMMUNITY

On Sunday, November 8<sup>th</sup>, 2009, in honor of the 24<sup>th</sup> anniversary of the Pasadena parish community, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate,



celebrated Divine Liturgy and delivered the sermon at St. Sarkis Church. Very Rev. Fr. Barthev Gulumian and parish pastor Rev. Fr. Khoren Babochian assisted at the altar.

The Prelate gave thanks to God for the growth the parish community has experienced in the last 24 years, from its humble beginnings on Allen Blvd. to having its own church today, St. Sarkis, by the grace of God, and prayed for continued advancements for the community in the coming years.

The topic of the sermon was from a passage in the Gospel of Luke which chronicles the healing of a woman and of Jesus bringing to life the daughter of Jairus. The Prelate stated that though the woman and Jairus had different spiritual needs and were facing different circumstances, both were seeking to see Jesus

Christ, to meet Him and receive His blessings. And it was through their faith that their prayers were answered. The woman was healed not because she touched Jesus' garment, rather because she believed in His power and His ability to heal, just as Jairus did.

The Prelate asserted that today, we need the same faith, we need to be filled with the Holy Spirit, to pray for ourselves and for one another, and to cast out destructive and debilitating thoughts and feelings. "Prayer must be our path, with faith as our guide; only then will we receive the answers to our supplications. Let us therefore relinquish our worries to God for He will ease our troubles. Let us open our hearts and souls to God and He will rid us of our weaknesses and iniquities and guide us in our service and our mission", concluded the Prelate.

Requiem service was offered following Divine Liturgy, after which the Prelate was led in a procession to the entrance of the church where the Prelate once again congratulated the parish on their anniversary. The singing of "Cilicia" and the Pontifical anthems concluded the service.

In the afternoon, the Prelate presided over the 24<sup>th</sup> anniversary luncheon which took place at the hall of the Marash Compatriotic Union with the participation of clergy members, Executive Council, Board of Trustees, and Ladies Auxiliary members, sponsors and friends. During the luncheon remarks were delivered by the Pastor and Board of Trustees Chairman, and the Prelate once again conveyed his well wishes.

\*\*\*

## **ՅՌՈՒ-ի 100-ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԵՐԱԾԾԱԿԱՆ ԵՐԵԿՈՅ**

ՅՌՈՒի 100ամեակին նուիրուած ձեռևարկներու շարքին է «Ելեմընթ» նուազախումբի համերգը, որ տեղի պիտի Կիրակի, 15 Նոյեմբերին, Երեկոյեան ժամը 6:00-ին, Կիւնտեյլի Փրեսափթերելս եկեղեցւոյ մէջ:

Յանուս Առաջնորդ Արքազան Յօր, Արք. S. Արտակ Զհնյ. Տեմիրճեան ներկայ պիտի ըլլայ համերգին:

## **ELEMENT BAND CONCERT DEDICATED TO ARS CENTENARY**

Under the auspices of the ARS Regional Executive, the ARS Centennial Fund Committee has organized a concert featuring the Element Band to celebrate a 100 years of service. The concert will take place at Glendale Presbyterian Church on Sunday, November 15<sup>th</sup>, 2009.

Rev. Fr. Ardash Demirjian will represent the Prelate.

\*\*\*